Արձանագրություն թիվ 1

ՀՀ ՇՄ Արթիկ համայնքում 30. 04. 2021 թ. կայացած հանրային քննարկման

30.04.2021թ. ***ք. Արթիկ***

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2021 թվականի ապրիլի 30-ին ժամը 11:30-ին ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի համայնքապետարանում տեղի ունեցավ Արթիկի հրաբխային տուֆի հանքավայրերի արևելյան՝ 08-002-0251 կադաստրային թաղամասում քարի արդյունահանման նպատակով <<Կլորիկ>> ՍՊԸ-ին վարձակալությամբ տրամադրման նպատակով հանրային քննարկում:

Հանրային քննարկմանը մասնակցում էին Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Գրիգորյանը, Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ Ժ. Վարագյանը, <<Կլորիկ>> ՍՊԸ-ի տնօրեն Տ. Պետրոսյանը, Արթիկ համայնքի ավագանու անդամներ՝ Ա. Նիկողոսյանը, Ա. Աբրահամյանը, Ա. Չոփիկյանը, Արթիկի համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Նիստը վարում էր Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Գրիգորյանը: Նա մասնակիցներին ներկայացրեց հանդիպման օրակարգը. <<Կլորիկ>> ՍՊԸ-ի տնօրենը Արթիկ համայնքի վարչական սահմանում գտնվող հանքերում ցանկանում է կազմակերպել տուֆ քարի արդյունահանում: Նա նշեց, որ վերոնշյալ տարածքներում նախկինում <<Արթիկ Տուֆ>> ՓԲԸ-ի կողմից իրականացվել է քարի արդյունահանություն, սակայն ընկերության սնանկացումից հետո քարի արդյունահանումը դադարել է: Այժմ այդ տարածքները վերադարձվել են համայնքին, և օրենքով սահմանված կարգով այսօր իրականացվում են հանրային լսումներ՝ վերոհիշատակյալ հանքատարածքները <<Կլորիկ>> ՍՊԸ-ի կողմից կրկին վերաշահագործման թույլտվություն ստանալու համար: Ա. Գրիգորյանը նշեց, նախկինում այս հարցի

շուրջ 2 հանրային քննարկում արդեն իսկ կազմակերպվել է, սակայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից չեղարկվել է <<Կլորիկ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրագիրը՝ պատճառաբանությամբ, որ նշված հանքավայրերը մոտ է գտնվում ՀՀՇՄ նախարարության ԲԾԻԳ-ի կողմից <<Արթիկ քաղաքի փակ քարհանքերի և ջրհեղեղների կառավարում>> պիլոտային ծրագրով իրականացվող 40 հա ռեկուլտիվացիոն տարածքին:

Ելույթ ունեցան.

Արթիկի համայնքապետարանի Քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ բաժնի պետի ժ/պ Գ. Քարտաշյանը, նշելով, որ նախկինում <<Կլորիկ>> ՍՊԸ-ի կողմից քարի արդյունահանման նպատակով ներկայացված հայտը 5-րդ կարգի գործունեություն է համարվում, քանի որ քարի արդյունահանման համար պայթյուն չի նախատեսվում: Շահոգործման ենթակա տարածքը հարում էր ԲԾԻԳ-ի կողմից իրականացվող <<Արթիկ քաղաքի փակ քարհանքերի և ջրհեղեղների կառավարում>> ծրագրի տարածքին: Նախկինում կազմակերպված հանրային քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ օրենքով պահանջում է այս երկու տարածքների միջև պահպանել 50 մ սանիտարական գոտի, ինչը 5-րդ կարգի գործունեության համար բավարար է: Հայտում խմբագրվել են շահագործման նպատակով առանձնացված տարածքների սահմանները՝ կրկին դնելով ծրագիրը հանրության դատին:

Համայնքի ավագանու անդամ Ա. Նիկողոսյանը, նշեց, որ ինքը, որպես համայնքի ավագանու անդամ, կողմ է հանքավայրերի վարձակալությամբ տրամադրմանը ոչ միայն համայնքի բյուջե ակնկալվող դրամական հոսքի, այլև նրա համար, որ քարի՝ որպես շինանյութի դիֆիցիտ կա Հանրապետությունում, չհաշված քարի՝ որպես շինանյութի բարձր շուկայական գինը: Արթիկի տուֆքարի արդյունահանմամբ մենք կսաստենք այս դեֆիցիտը:

Ա. Գրիգորյանը ներկաներին խնդրեց հարցերի միջոցով ակտիվ մասնակցել քննարկմանը: Նա նշեց, որ հանքերի շահագործումով կստեղծվի նոր աշխատատեղեր, ընկերությունը կմասնակցի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Սակայն հավելեց, որ հանքերի շահագործումն այնպես պիտի իրականացվի, որ հարևանությամբ գտնվող 40 հա լքված քարհանքերի ռեկուլտիվացիայի բնապահպանական ծրագրին չխանգարի: Այս ամենը պետք է կազմակերպվի և իրականացվի միայն օրենքով նախատեսվող ներմերին համապատասխան:

Մասնակիցների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

<<Կլորիկ>> ՍՊԸ-ի տնօրեն Տ. Պետրոսյանն ասաց, որ հանքերի շահագործումից հետո իրենք պատրաստ են ծառատունկ իրականացնել սանիտարական գոտում: Եթե օրենքով թույլատրվում է 50 մ սանիտարական գոտի պահպանել երկու տարածքների միջև, ապա իրենց ընկերությունը պատրաստ է 100 մ սանիտարական գոտի պահպանել՝ կարևորելով և ընդառաջելով ԲԾԻԳ-ի ծրագրին:

Մասնակիցների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

Համայնքի բնակիչներից հարցրեցին, արդյոք ջրցան մեքենա աշխատելու է քարի արդյունահանման ժամանակ:

<<Կլորիկ >> ՍՊԸ-ի տնօրեն Տ. Պետրոսյանը նշեց, որ ջրցան մեքենայի առկայությունը քարի արդյունահանման ընթացքում պարտադիր է, և առանց դրա լիցենզիա չի տրամադրվում ընկերությանը:

Ա. Գրիգորյանը ներկաներին խնդրեց հարցերի միջոցով ակտիվորեն մասնակցել քննարկմանը: Նա հավելեց, որ հանքերի շահագործումով կստեղծվի նոր աշխատատեղեր, ինչը պակաս կարևոր չէ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Քննարկման արդյունքում տրվում է նախնական համաձայնություն Արթիկի տուֆի հանքավայրի արևելյան՝ 08-002-0251 կադաստրային թաղամասում քարի արդյունահանման նպատակով <<Կլորիկ>> ՍՊԸ-ին վարձակալությամբ տրամադրման նպատակով:

Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ
հանրային քննարկման պատասխանատու
աշխատակազմի քարտուղար՝ _____ Ա. Գրիգորյան

<<Կլորիկ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ _____ Տ. Պետրոսյան

Արձանագրեց՝ Արթիկի համայնքապետարանի
Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության
և հանրային կապերի բաժնի
առաջատար մասնագետ՝ _____ Տ. Չարչյան

Հանրային քննարկումներին մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

Արթիկի հրաբխային տուֆի հանքավայրերի արևելյան՝ 08-002-0251 կադաստրային թաղամասում քարի արդյունահանման նպատակով <<Կլորիկ>> ՍՊԸ-ին վարձակալությամբ տրամադրման նպատակով հանրային բաց լսումների մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

30.04.2021 թ. ժամը 11:30-ին

Արթիկի համայնքապետարան

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	Ստորագրությունը
1	[illegible]	093010745	[illegible]	
2	[illegible]	093 20-07-50	[illegible]	
3	[illegible]	098 273073	[illegible]	
4	[illegible]	077 038 035	[illegible]	
5	[illegible]	094-08-48-00	[illegible]	
6	[illegible]	077-770-775	[illegible]	
7	[illegible]	077-91-21-23	[illegible]	
8	[illegible]	093666985	[illegible]	
9	[illegible]	088668809	[illegible]	
10	[illegible]	095 32 90 61	[illegible]	
11	[illegible]	094 21 72 95	[illegible]	
12	[illegible]	093 74 38 39	[illegible]	
13	[illegible]	094 42 08 42	[illegible]	
14	[illegible]	094 69 11 88	[illegible]	
15	[illegible]	093 138 018	[illegible]	
16	[illegible]	093 344430	[illegible]	
17	[illegible]	077852021	[illegible]	
18				
19				
20				
21				
22				